# ԲԱՄԱՐԳԵԶԱՐԻ
# Տ Ր Ջ Ա Ն

## ՄԱՔԵՆՑԱՑ ՎԱՆՔ

*Գտնվում է Ցարփուզլու և Չիչակլու գյուղերի մոտ. գրականության մեջ անվանվել է Մաքենոց, Մաքենյաց, Մաքենոցաց և Մաքեստենից վանք։ Մատենագրական տեղեկությունները նրա մասին հասնում են մինչև* VII *դարը։ Գեղարքունիի ամենահեղինակավոր վանքն է եղել. նշանավոր դեր է կատարել դպրության, մանավանդ եկեղեցական կարգերին վերաբերող գրականության ասպարեզում. տվել է շատ բարձրաստիճան հոգևորականներ։*

IX *դարի վերջում Գեղարքունիի Սոփան իշխանը հիմնովին նորոգում կամ ի նորո շինում է վանքի գլխավոր՝ ս. Աստվածածին եկեղեցին։ Արևելյան պատի վրա գրել է տվել մի մեծ արձանագրություն, որի բեկորներն են միայն պահպանվել, բայց պատմագիր Ստ. Օրբելյանը արտագրել է այն և տեղավորել իր աշխատության մեջ։ Դեռևս Օրբելյանի ժամանակ ինչպես եկեղեցին, այնպես էլ արձանագրությունն արդեն վնասված են եղել։*

*Ներկա շենքերը բաղկացած են երկու խմբից, մեկը պարսպափակ բակի ներսում, մյուսը՝ պարսպից դուրս։*

*Բակի ներսում է ս. Աստվածածնի գլխավոր տաճարը, ներքուստ խաչաձև, գմբեթավոր է, անկյուններում ունի խորաններ. կանգուն է, պատերի վրա երևում են բազմաթիվ նորոգումների հետքեր։ Արևմտյան կողմում եղել է հետագայում ավելացրած հասարակ գավիթ, որի պատերի կեսն են պահպանվել։ Այստեղ եղել է նաև թաղակապ մատուռ, որի ծածկն այժմ թափված է։ Բակի մեջ մնում են բազմաթիվ խուցերի և այլ շինվածքների ավերակներ։*

*Պարսպից դուրս առաջին խմբից հազիվ 20-30 մետր դեպի հարավ-արևելք կանգուն մնում են իրար կից երկու թաղակապ եկեղեցիներ. սրանք ևս հին են, նորոգման հետքեր չունեն, ինչպես նաև ոչ մի արձանագրություն։*

*Պարսպից դուրս, հարավային կողմում, հավանաբար, եղել է գերեզմանատուն, ուր այժմ մի քանի խաչքարեր կան միայն։*

*Հուշարձանների այս խմբից մեր ժողովածուն ունի 13 արձանագրություն՝ որոնցից 5-ն է նախկինում հրատարակվել ։*

***1209. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** եկեղեցու արևելյան և արևմտյան պատերի մեջ, արտաքուստ, օգտագործված է Սոփան իշխանի մեծ արձանագրության մեջ, որոնք սակայն ամբողջական տողեր չեն կազմում։ Այդ պատճառով էլ դրանց միայն գծագրությունն ենք տալիս, իսկ բնագիրը՝ ըստ Ստ. Օրբելյանի.*



Կամաւն Աստուծոյ ես Սուփան, Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աստուածային կտակարանաւք. Եւ ետու զսեփական տեղն մեր ի սա, որ Քուս անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, իւր ամենայն սահմանաւք, լերամբ և դաշտիւ. Եւ ետու որս ձկանց զԲողաշէն՝ սեղանոյն, և :Չ: (700) դրամ ի Դեղձանազետոյ ղապալէն, :Մ: (200) դրամ ի Կաքկայ, :ՅԾ: (350) յԱնմեռէն, որ լինի :ՌՄԾ: (1250) դրամ: Եւ ետու :Ե: (5) կուղպակս յԱնի և :Ե: (5) այգի յԵրևան և :Շ: (500) առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և :Բ: (2) այգի յԵղեգիս. Եւ զամենայն պէտս սուրբ եղբարութեանս լցի առատապէս և փարթամացուցի՝ ներքոյ և արտաքոյ. Ետու և ջոլիրս եզանց և ջոկս զուարակաց և անդեայս և հաւտս ոչխարաց: Եւ արդ մաղթեմք զամենայն աստուածացեալ սուրբ ուխտիդ պաշտաւնեայսդ, որում Աստուած է միջնորդ, կատարել վասն մեղուցեալ հոգւոյս զերկու քառասունսն տէրունի պատարագ ինձ. Եւ անխափան երգել զերեկորին սաղմոսն՝ զնեղութեան կանոնն և զառաւաւտուն սաղմոսն, զոր կարգեալ եմ յամենայն եկեղեցիք: Եւ տր. Յովհաննէս Հայոց կաթողիկոսն, ի տանէս մի՛ իշխեսցէ դաս կամ վայքար հանել. և մի՛ յիմ որդւոց կամ ի ժառանգաւորաց. այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել ջանայ և որ հակառակ անուանեսցի՝ նզովս չարաչար ընկալցի յԱստուծոյ և համենայն աթոռակալաց սրբոյն Գրիգորի, և մասն ընդ Յուդայի մատնչին եղիցի: Եւ դարձեալ խաւսիմ ընդ ձեզ. առաջնորդք և կրաւնաւորք. վանացս, հաստատուն կալ մինչ ի գալուստն Քրիստոսի. Եւ վար-

դայետելն և սաղմոսելն վասն իմ անխափան եղիցի. Եւ եթէ ոք ծուլասցի ի քառասնեակ աւուրսդ ամ յամէ կատարել զմեղսաքաւիչ սուրբ խորհուրդն յետ ելից իմոց ի կենցաղոյս, ի Քրիստոսէ որոշեալ եղիցի, և մասն ընդ Սիմոնի կախարդի ընկալցի, և ի սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի։

Շինեցի և զեկեղեցին ի գիւղաքաղաքին Կոթայ. և ի նմա :Ը: (8) սենեակ. Եւ արարի պատիւ ի տան Տեառն, զոր շինեցաք. Եւ զԱստուածածնին քահանայքն ազատ արարաք յամենայն արքունի չարէ. ընդ նոսին և զայլ պաշտաւնեայս եկեղեցւոյ որք ի քահանայական կարգէ։

Ծանոթ. *Փորագրված է եղել սկզբնապես արևելյան պատի վրա արտաքուստ, այժմ միայն մի քանի քարեր են մնացել իրենց հին տեղում. մնացածները խախտվել են ու դրվել պատահականորեն։ Բոլոր դեպքերում պահպանվածները փոքր մասն են կազմում այդ ընդարձակ արձանագրության։ Գրված է եղել* IX *դարի վերջերին, բայց դեռևս Ստ. Օրբելյանը գրում է.* «Բայց վասն հնութեանն և խախտելոյ քարանցն ոչ կարացաք զբովանդակն իմանալ. այլ բազում բանք և տուրք իշխանացն պակասին»։

*Հրատարակիչներն արտագրել են Ստ. Օրբելյանի Պատմության տարբեր ձեռագրերից, որով և որոշ տարբերություններ ունեն. մենք հրատարակվածները համեմատելով՝ ընդունել ենք հավանականները։*

**Հրատ. Օրբելյան, 179—181։ Ալիշան, 88—69։ Սմբատյանց, 578—579։ Լաուենի. 246**

***1210. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատի վերին մասում, պատուհանի շուրջը, արտաքուստ 5 տող.*

ՇՆՈՐՀՕՔՆԱ̅ՅԵՍՄԷԼԻՔՄԷԼԻՔԲԷԿՍ
ՈՐԴԻՄԵԾԻՊԱՐՈՒՆ:ԱԾԱՊՕԻՆԻՇԽՈՂ
ՏԱՆՍԳԵՂԱՄԱ:ՎԵՐՍՏԻՆՆՈՐՈԳԵՑԱՔ
ՍԲԵԿԵՂԵՑԻՍ:ԻՇՏԿԻՄԷՋՄՈՅՆԱՄԻ
ՅԻՇԵՑԷՔՆԻ ԱԶՆ: ՎՐԱԿԱՑՆ

ՇՆՈՐՀՕՔՆ Ա̅Յ. ԵՍ ՄԷԼԻՔ ՄԷԼԻՔ-ԲԷԿՍ,| ՈՐԴԻ ՄԵԾԻ ՊԱՐՈՒՆ ԱԾԱ-ՊՕԻՆ, ԻՇԽՈՂ| ՏԱՆՍ ԳԵՂԱՄԱ, ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ| Ս̅Բ. ԵԿԵՂԵՑԻՍ ԻՇԱՏԱԿ ԻՄ ⌊ԵԻ⌋Զ⌊Ի⌋ՄՈՑՆ. ԱՍԷ⌊Ն⌋.| ՅԻՇԵՑԷՔ ՆԻԱԶՆ Վ⌊Ե⌋Ր⌊Ա⌋ԿԱՑ⌊ՈՒ⌋Ն։

Ծանոթ. *ԱԾԱՊՕՎ անունը Աստվածապովի կրճատ ձևն է։ Մելիք Մելիքբեկը իշխել է* XVI *դարի երկրորդ կեսին. հիշատակված է մինչև 1578 թվականը։*

**Հրատ. Սմբատյանց, 571։ Ալիշան, 69։ Շահխաթունյանց, II, 262—258։ Ջալալյանց, II, 118։**

***1211. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** եկեղեցու հարավային պատին՝ արտաքուստ, վերևում փորագրված երկու խաչ. 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻԱՆՅԻՇԱՏԱԿՄԱՆՈՒԷԼԻՆ

ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՆՑԻՇԱՏԱԿ ՄԱՆՈՒԷԼԻՆ։

Ծանոթ. *Համարում ենք* XVII *դարի։*

***1212. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** եկեղեցու հարավային պատին՝ արտաքուստ, թերի թողնված 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻ···

Ա̅Ծ ՈՂՈՐՄԻ . . .

Ծանոթ. XVII *դար։*

**1213. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** *եկեղեցու հարավային պատի արևմտյան մասում, արտաքուստ (հետագայում հարմարեցված ավանդատան պատին), 11 տող.*



ԿԱՄԱՎՆ Ա̄Ց. ՈՐ ՍԻՒՆԵԱՑ ՍՈՒՓԱՆ ԻՇԽԱՆ ՇԻՆԵՑ ՄԱՔԷՆՈՒՑ ԵԿԵՂԵՑԻՍ Ի :Գճ: (300)| ԹՎԻՆ: ՄԻՆՉԻ :ՌՃԺԵ: (1666) ԹԻՎՆ ԵՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ. ՈՒԽՏԻՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ Խ˪Ա˩ՉԱՏՈՒՐ| ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՈՐԴԻ ԳՈԼՈՎ ՅԱԿՈԲԱ, ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԵՒ ՊԱՅԾԱՌԱՑՈՒՑԻ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ| ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅ- ՐԱՊԵՏՈՒԹԵ. ՟ՏՆ. ՅԱԿՈԲԱ, ԵՒ ՄԻԱԲԱՆ˪Ք˩ ՍԲ. ՎԱՆԱՅՍ ՁՏՐ.|ՊԱՐՍԱՄՆ, ՁՏՐ.| ԳՐԻԳՈՐՆ ԵՒ ՍԱՐԿԱՎԱԳՈՒՆ˪Ք˩ ՋԳՐԻԴՈՐՆ, ՂԱԶԱՐՆ ԵՒ ՍՏԷՓԱՆՈՍՆ, ՏՆՏԵՍ ՍԱ|ՐՈՒԽԱՆ ՅԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՍ̄.| ԱԾ. ԵՒ ՈՐՔ Յ˪Ի˩ՇԱՏԱԿԷ ԶՄ|ԵԶ՝ Յ˪Ի˩ՇԱՏԱԿ Ն˪Ո˩Ց˪Ա˩| ԽԱՂԱՂՈՒԹԲ. ՊԱՀ|ԵՍՑԷ ԱՄԵՆ˪ԵՑՈՒՆ˩ ՀԱՅՐ:

*Հրատ. Շահխաթունյանց, II, 252։ Ալիշան, 69։ Ջալալյանց, II 118։ Սմբատյանց, 570-571։ Լալայան, XXIV, 56։*

Լուսանկ. 247

**1214. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** *եկեղեցու հյուսիսային պատի վերին մասում, քիվի տակ, արտաքուստ. 1 տող.*



ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ̄. ՄԱՀՐԵՑԻ ԽՈՃԱ ՍԱՐԳԻՍՆ, ՈՐ ԵՏ ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ :Բ: (2) Թ˪ՈՒ˩Մ˪Ա˩Ն:

**Ծանոթ.** *Համարում ենք ժամանակակից նախորդներին,* XVII *դար։*

*Հրատ. Սմբատյանց, 571։*

Լուսանկ. 248

**1215. ԽԱՉՔԱՐ,** *օգտագործված է գավթի հյուսիսային մուտքին որպես կողքի քար. ճակատին երկու կիսեղծ տող.*



ԵՍ ՆԱՍԻՊՍ ԿԱ˪Ն˩ԿՆԵՑԻ| ՍԲ̄. ԽԱ˪Չ˩Ս ՀՈԳՈՑՆ ԻՍՈՑ...

**Ծանոթ.** XV—XVI *դարեր։*

1216. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին գեղագիր 13 տող.*



ԵՍ ԱԻԵՏԻՍ| ՎԱՐԴԱՊԵՏՍ ԱՌ|ԱՋՆՈՐԴ ՍԲ. Ա|ԾԱԾՆԻՍ ՀԱ|ՆԳՈՒՑԻ ՏԱՊ|ԱՆՍ ՀՕՐՆ Ի|Մ ՊԱՐՈՒՆ ՆԻԱ|ՋԻՆ, ՈՐԴԻ| ԻՍԱՑՊԷԿԻՆ, ԹՈՌՆ ՊԱՐՕ|Ն ՄԷԼԻՔ ՇԱ|ՀՆԱԶԱՐԻ|Ն. ԹՎ. :ՌՃԽԲ: (1693):

Հրատ. Սմբատյանց, 571։ Լալայան, XXIV, 55,

Լուսանկ. 249

1217. *ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որն այժմ չկա, եղել է՝*

Այս է հանգիստ Եղիին որդի Պապախանին, որ ի անաւրինաց սպանեցաւ թվ. :ՌՃԽԲ: (1693):

Հրատ. Սմբատյանց, 571։ Լալայան, XXIV, 56։

1218. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է վանքից հարավ, մոտ 20 մետր հեռու, բանջարանոցի հասարակ պատի մեջ, բայց իր նախնական տեղում. ճակատին և խորանի շուրջը 2 տող.*



ԱՍՏՈՒԾՈՎ ԿԱՆԿՆԵՑ|ԱՒ| Խ|Ա|ՉՍ | ԹՎ. :Ջ: (1451):

Լուսանկ. 250

1219. *ԽԱՉՔԱՐ, կից նախորդին հյուսիսից, ճակատին 2 տող.*



ԵՍ Դ|ԱՒԻ|ԹՍ ԿԱ.Ն|ԿՆ|ԵՑԻ ՍԲ. Խ|Ա.|ՉՍ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին։*

Լուսանկ. 251

1220. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է պարսպից դուրս, Թաղածածկ եկեղեցու հարավային պատի տակ, շրջանակներին և ստորին մասում 16 տող.*




ԿԱՄ|ԱՒՆ| ԱՑ.| ԵՍ ՎԱՐԴ ՔԱՀԱՆԱՑ| ԿԱՆԳՆԵ|ՑԻ ՋԽԱՉ|Ս ՓՐԿՈՒ|ԹԻ ՀԱՒ|Ր ԻՄՈՑ| ԻՆՈՔԻՆ| ԵՒ ՄԱՒ|ՐՆ ԻՄ Կ|ՈՒԼՋՀ|ԱՆԻ,| ԴԱ.ՍՏԱՑԿՈՒԼԻՆ, ՄԻԼԻԹՈՒԽՏԻՆ|. ԹՎ. :ՋԿԴ: (1515):

Լուսանկ. 252

**1221.** ***ԽԱՉՔԱՐ,*** *կից նախորդին հարավից, ճակատին կիսեղծ 3 տող.*




⌈ԱՍՏՈՒԾՈ⌉Վ ԵՍ ՊԼ⌈ՀՆ⌉ՍԱՄՍ
Կ⌈ԱՆ⌉ԳՆԵ⌈ՑԻ⌉| ՁԽԱՉՍ ՄԱՒՐՆ
ԻՄ ՇԱՀԱ⌈Լ⌉|ԱՄԻՆ ԹՎ. :ՋԿԴ:
(1515):

Լոռանկ. 253

## ՑԱՐՓՈՒԶԼՈՒ

*Գյուղի հին անունը հայտնի չէ, Սմբատյանցն ու Լալայանը թուրքական Ցարփուզլու անունը համարում են թարգմանությունը հայերեն Դաղձանոց[1] տեղանվան, բայց գրավոր աղբյուրներում այս վերջին անունով գյուղ չկա հիշատակված Դեղարքունիքում։*

*Գյուղամիջում մնացել է մի գերեզմանատան մնացորդ, իսկ գյուղի հյուսիսային եզրին մի հասարակ եկեղեցու ավերակները և կողքին 2 խաչքար։*

*Այստեղ պահպանված հուշարձաններից հնագույնն ունի 1536 թվականը։*

*Մեր հավաքածուի բոլոր 12 արձանագրությունները հրատարակվում են առաջին անգամ։*

**1222.** ***ԽԱՉՔԱՐ,*** *փոքր, կանգնած է գյուղի հյուսիսում գտնվող կիսավեր եկեղեցու մոտ. թևերի արանքներում և ստորին մասում 3 տող.*




ԹՎ. :ՋՁԵ: (1536):
ԵՍ ԱՆԱՆԻԱՅ ՔԱՀԱՆԱՅ| Կ⌊Ա⌋ՆԿ⌊Ն⌋ԵՑԻ
ԽԱՉՍ:

**1223.** ***Մեծ և գեղաքանդակ,*** *կանգնած է բարձր պատվանդանի վրա, ավերակ եկեղեցուց հարավ. քիվին, շրջանակին և ստորին գնդի շուրջը.*




ՍԲ. Խ⌊Ա⌋ՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱՌԸՍՏԱԿԷՍԻՆ|,
ԱԼԷՔՍԱՆՈՍԻՆ| ՏՐ. ԱՆԱՆԻՆ ⌊Է⌋|Խ⌊Ա⌋ՉՍ:|
ԹՎ.| :ՋՁԶ: (1537):

[1] *Սմբատյանց, 598; Լալայան, XIX, 10։*